

ՄԱՐԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 3

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ
ՄԱՐՏԻՐՈՍԸ

Գ Ր Է Գ

Ս. Մ. ՇՍ. ՀՆԱ. ԶԱՐԵԱՆՆՑ

ԳՐԱՆՆԵՐ ԿՈՊԵԿ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶՍԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Տպ. Ն. Ս. Ղազնեան, Պոլից. 7

Թիֆ

Լիզ

891.99

Մ-50

19 NOV 2011

2. 39
U-50

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 3.

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ
ՄԱՐՏԻՐՈՍԸ

Գ ր է ց

Ս. Մ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆՆՑ



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Էլէկտրասպ. օր. Ն. Ս. Ղազարյանի Պոլիգ. 7

1913

43157

[Faint, illegible text at the top of the right page]

Գործակատար Մարտիրոսը նոր էր ուռը դը-
րել տասն և չորս տարում, որ մի օր հօրեղ-
բայրը Շուշուայ թեմական դպրանոցից հանեց,
երկու ուրբի դրաւ գրպանը ու ֆուրգոնով ճա-
նապարհեց Բագու աշխատանքի: Այժմ նա յի-
սուն տարեկան գործակատար է. և ծանօթ թէ
անծանօթ նրան միշտ յիշում են նոյն հասակում,
նոյն կերպարանքով և նոյն խանութում գործա-
կատար: Ոչ ոք չի յիշում նրա երեխայութիւնն
ու երիտասարդութիւնը. ումնից էլ հարցնելու
լինես, կասեն, որ Մարտիրոսը միշտ էլ եղել է
յիսուն տարեկան և ծնուել է գործակատար: հն-
րիւր տարի էլ ապրելու լինի, էլի նոյն Մարտի-
րոսն է մնալու, ոչ պառաւելու է, ոչ շահելա-
նալու: Նոյն իսկ նրա հարազատ մայրը, նրանց
թաղի կանայք, որ այնքան սիրում էին նրա ա-
կանջթեթևութեան համար, դրանք էլ միշտ կա-
սէին: «Փուշ իլաձը սկի չի փոխուում, հէնց էն
է, հէնց էն, ոչ աւելանում է, ոչ պակասում:»
Եւ իրօք ընկերները բոյ քաշեցին, առնա-

27.06.2013

[Faint mirrored text from the reverse side]

[Faint mirrored text from the reverse side]



1227-87

[Faint mirrored text from the reverse side]

կան կերպարանք առան, կուրծք ու թիկունք-
ները լայնացան, բեղ ու միրուք դուրս եկաւ
դէմքներին, իսկ Մարտիրոսը մնաց իր նոյն կի-
սատ պուստ երեսկահատով, իր նոյն նիհար, չոր,
նեղ կրծքով: Ճիշտ է բեղատեղերը ժամանակին
սևացաւ, բայց այդ էր ու այդ, այդտեղ էլ կանգ
առաւ. աւելի խտանալու ու աճելու ոչ մի
յոյս չեղաւ: Միրուքն էլ նոյն բախտին էր ար-
ժանացել. միայն մի գունատ սև մազ էր երևում
սուր ծնօտին կպած, որ նոյնպէս ոչ երկարա-
նում էր, ոչ կարճանում. իսկ այտերի վրայ ցան-
ցրիւ հատ հատ բսած մազերը այնքան քիչ էին,
որ մի քանի վայրկեանում կարելի էր համարել,
վերջացնել:

Բայց և այնպէս Մարտիրոսը անդուր դէմք
չունէր. հէնց առաջին անգամ նրա մանր, բարի
աչքերը, նրա դուրս ցցուած լայն ճակատը տես-
նողը այն տպաւորութիւնն էր ստանում, որ
գործ ունի մի բարի, շիտակ, հաւատացող մար-
դու հետ:

Սուտ չէր, որ ասում էին, Մարտիրոսը ծը-
նուել է գործակատար. նա զեռ երեխայ էր, որ
դպրոցից տուն էր գառնում թէ չէ, բանի էր
կենում: Մինչև մութն ընկնելը ջուր էր կրում
շալակով, փայտ կտրատում, նորոգում տան չորս
կողմը եղած ցանկապատը. իսկ հարևանների պա-
տուէրներին խօ վերջ չկար. տեղից վեր կենողը

Մարտիրոսին էր դիմում: «Մարտիրոսը համ լաւ
ապրանք է առնում, համ էժան է առնում, համ
էլ հարամութիւն ասածդ չգիտէ, ինչ բան է»,
ասում էին հարևանները: Եւ Մարտիրոսը մինչև
խանութների փակուելը իրենց թաղից դէպի վա-
ճառանոց տանող փողոցն էր անդադար չափչը-
փում. և մի անգամից մի անգամ չէր պատահած,
որ մէկն ու մէկի խնդիրը մի օր տափը գցէր,
մերժէր:

Մարտիրոսը աչքը կուշտ մարդ էր: Նա եր-
բէք չէր նախանձում իր ընկերներին, որ միա-
սին ֆուրգոնով եկան Բագու: Ութ հոգի էին,
բոլորն էլ համարեա մի հասակի. և այն օրից,
երբ իջան ֆուրգոնից և ամեն մէկը ինքնազը-
լուխ իր մասին սկսեց մտածել, շատ և շատ տա-
րիներ են անցել: Կեանքի մէջ բոլորն էլ իրենց
ճանապարհը գտան, որը դժուարութեամբ, որը
հեշտ կերպով և հասան իրենց փայփայած նպա-
տակին — «մարդ» դարձան, «անուն» հանեցին, և
այժմ՝ սեփական գործի տէր դարձած՝ հարիւր
հազարների հետ են խաղում:

Մարտիրոսը չի մոռացել, լաւ է յիշում սու-
տասան Մարգարին, աչքածակ Աւաքելին, խոով-
կան Յովհաննէսին, շուի փշոդ Սիմոնին, թըր-
քերէն երգող Խուրշուղին, վավրսան Մանուշա-
րին, աքաղաղ կուռացնող Աբրահամին: Եւ նա
աչք չունէր դրանց ունեցածին. միայն երբեմն

խօսքը տեղը եկած ժամանակ մի առանձին բա-
լականութեամբ, մինչև անգամ պարծանքով կը-
պատմէր.

«Հա գիտի, հս, երեսուն թէ երեսուն և
հինգ տարի առաջ դրանց բոլորին ես եմ բերել
Բագու: Աստ քանի՞ օրում:—Հաւատոյ չի գալ,
եթէ ասեմ՝ տասն և երկու օրում: Խաւար ժա-
մանակ էր. երկաթուղի չկար: Ութ հոգի էինք.
ծախսարար՝ ոչ բարով՝ ինձ էին նշանակել: Շատ
ծոյլ տղաներ էին, մինչև թէյը չընէի, մինչև
հացը չպատրաստէի, տեղներից չէին շարժուի:
Ամեն մէկիս գրպանում երկու, երեք ուրբի ու-
նէինք, և դա այն ժամանակ մեծ փող էր մեզ
համար. բայց հիմա արի տես, ինչ բոօ բոօ են
անում: Ի՞նչ ասեմ, լաւ էլ չի ասելը, բացի մի
երկուսից, մնացածինը հալալ աշխատանք չի. չի
ուտուի, ինչպէս էլ լինի, երբ և իցէ իրենց պա-
տիժը կստանան: Է՛հ, ինչ եմ ասում, Աստուած
իրենց գործքով իրենց բարի տայ»:

Մարտիրոսը ինքնասէր, հպարտ էր. երբէք
չէր ցոյց տալիս, որ ճանաչում է իր հարստա-
ցած ընկերներին, իրեն քաշուած, հեռու էր պա-
հում նրանցից. իսկ նրանք երբէք չէին յիշում
իրենց սրտակից ընկերոջ, իրենց ծախսարար, ձիգ
գիշերները ֆուրգոնում հէքեաթ ասող Մարտի-
րոսին:

Յիսուն ուրբի ստացող յիսուն տարեկան

Մարտիրոսը մի հատ կոպէկ չէր կարողացել յետ
գցել սև օրուայ համար: Նա ամուսնացած է.
ունի չորս աղջիկ: Սիրում է կնոջը, երեխանե-
րին և ամեն կերպ աշխատում է անուսում չը-
թողնել նրանց:

«Ինձ անուսում թողեցին, ասենք այն էլ մի
ուսում չէր, որ մեզ էին տալիս. իմ փոխարէն
երեխաներիս անպատճառ ուսում կտամ, որ վիզ-
ները ծուռ չմնան»,— յաճախ ասում էր Մար-
տիրոսը: Մեծ աղջիկը արդէն աւարտել է ծխա-
կան դպրոցը, երկուսը սովորում են նոյն դպրո-
ցում, իսկ չորրորդը դեռ փոքր է տանը:

Ապրում է Մարտիրոսը, ինչպէս ասում են,
քարին քացի տալով: Ամիս չի լինում, որ մինչև
ռոճիկ ստանալը մի երկու անգամ սրանից նրա-
նից ձեռաց պարտք չի վերցնի: Եւ ապրել է այս-
պէս ոչ թէ մի, երկու տարի, այլ քսան, քսան և
հինգ ձիգ տարիներ: Եւ չէր յոգնում Մարտիրո-
սը. մի օրից մի օր նրա մտքովը չէր անցնում
իր չարքաշ կեանքը, իր խեղճութիւնը: Մանուկ
հասակից օրն ի բուն չարչարուել, տանջուել և
ինչպէս հարկն է չվարձատրուել՝ այդ նրա մըտ-
քին չէր գալիս: Նա համբերատար եզան պէս աշ-
խատում էր, ուժասպառ լինում, երեկոները դառ-
նում տուն անհամբեր սպասող կնոջ ու երեխա-
ների մօտ, կատակներ անում, ծիծաղացնում. հէ-
քեաթներ ասում, որ առաւօտեան նորից վեր կե-

նայ, նոյն միատեսակ գործը նոր ուժով նորից սկսի:

Եւ Մարտիրոսը դժգոհ չէր կեանքից: Կինը լաւ տանտիկին, աղջիկը պարկեշտ, ընդունակ, ինքն էլ ժիր ու առողջ, էլ ի՞նչն էր պակաս: Փառք էր տալիս Աստծուն, որ մի կտոր «հալալ հաց», «քրտինքով աշխատած հաց» ունի ընտանիքի համար:

Մարտիրոսին լաւ ճանաչողները միշտ ասում էին՝ «այս մարդը իսկ ու իսկ ծնունել է գործի համար. տնաշէնը գործը հում հում է ուտում, էլ չի մտածում՝ գնահատող կայ, չկայ: Առանց գործի մի օր չի ապրի, կմեռնի»: Եւ իսկապէս բանելիս նա այնպէս էր ոգևորւում, որ մոռանում էր ամեն ինչ, անում էր աւելի, քան հարկաւոր է: Անում էր իր գործը, տեղն ընկած ժամանակ և ընկերոջ գործը, և ինչպէս երջանիկ էր զգում իրեն:

Քսան և՛ հինգ տարի է, ինչ ծառայում է Մարտիրոսը միւսնոյն տեղը: Յիշում է, թէ ինչպէս մի փոքրիկ, հասարակ չիթեղէնի խանութ էր ծառայութեան նոր մտած ժամանակ տիրոջ խանութը, բայց յետոյ քանի գնաց գործը մեծացաւ, մի աչք խանութը երկու դարձաւ, էլի մի երկու տարի՝ ու երկու աչքը չորս դարձաւ և այսպէս տարիների ընթացքում հետզհետէ հասաւ ութ աչքի: Իսկ ինքը... ինքն էլ մնաց նոյն Մարտի-

րոսը. միմիայն աչքի ընկնող նորութիւնը այն էր, որ մի քանի տարի էր, ինչ ուձիկը յիսուն ուրբի էին շինել:

Մարտիրոսի մտքովը չէր անցնում, թէ ընտանիքի տէր է, յանկարծ, բան է, հիւանդանայ կամ գործից դուրս անեն, ինչ կլինի ընտանիքի դրութիւնը: Նա իրեն բախտաւոր ասողի տակ ծնուած էր համարում: Մինչև այժմ ընտանիքի դեկը ձեռքին՝ պատուել, անցել է կեանքի դիզացած ալիքները. սրանից յետոյ քանի կենդանի է, քանի ոյժ կայ բազուկներում, նա ընտանիքը անփորձ խաղաղ նաւահանգիստը կհասցնի:

«Երեսնամեակիս ոտի կանգնեցնեմ, աչքովս տեսնեմ ամեն մէկին ինքնագլուխ ապրելիս, էլ ցաւ ու հոգս չունեմ: Ով ուզում է, թող ամուսնանայ. բայց մի արհեստ, հաց տուող գործ ունենան ձեռներին՝ անհրաժեշտ է: Ով է իմանում, չի ասուի, կեանքի մէջ ինչ կարող է պատահել. ինչո՞ւ վիզները ծուռ մնան, ինչո՞ւ ուրիշների ձեռքին նայեն, ինչո՞ւ անկախ ու ազատ չլինեն»։ այս էր Մարտիրոսի հոգսը:

Մարտիրոսի խաղաղ, միատեսակ կեանքը յիսուն տարիքում երեքաց. հեղահամբոյր կոհակները նրա առօրեայ կեանքի մակերևոյթը ծփծրփացրին, և այդ դուրեկան դողդոջ մակերևոյթի

վրայ ինչպէս ուրախ էր զգում իրեն: Անդրանիկ աղջկան, որ տասնեկինը տարեկան էր, նշանել էր և մի ամսից պիտի պսակէին: Փեսացուն թէ իր և թէ աղջկայ սրտովն էր: Մարդ ու կնիկ մեծ բաւականութեամբ էին խօսում շարունակ փեսացուի մասին: Փառք էին տալիս Աստծուն, որ մի այդպիսի պարկեշտ, երիտասարդ, առողջ տղայ պատահեց իրենց: Բաժինք էին ուզում տալ. անդրանիկ աղջկան մերկ չէին ուզում ճանապարհ գցել: Հաշուեցին մարդ ու կնիկ մի գիշեր, երբ երեխաները քնած էին. ցուցակագրեցին ամեն ինչ մի առ մի, յետոյ ամենայն լրջութեամբ կարդացին սկզբից՝ ամեն մի տողի վրայ կանգ առնելով: Շատ բան ջնջեցին, չափեցին, ձևեցին և դուրս եկաւ բաժինքն ու հարսանիքը ընդ ամենը երկու հարիւր ուսուրի:

— Երկու հարիւր ուսուրի որ լինի, հերիք կանի, ասաց կինը:

— Հա, երկու հարիւր ուսուրին բաւական կըլինի, բայց...

Մարտիրոսը էլ չչարունակեց, լեզուն կծեց, շուգեց կնոջը երկու հարիւր ուսուրու ձեռք բերելու դժուարութիւնը պարզել: «Կին-արմատի սիրտը բարակ կլինի, շուտ կկոտորուի, ինչ հարկաւոր է ամեն բան պարզ ասել», մտածում էր Մարտիրոսը:

— Ինչո՞ւ մի տեսակ տխրեցիր, ինչ պատա-

հեց քեզ, հարցրեց կինը:

— Ոչինչ, բայց շնորհակալ եմ Աստծուց, փեսադ լաւ տղայ է երևում. նրա վրայ շատերը աչք ունէին: Սիրտդ ուրախ պահիր, Աստուած ողորմած է, մինչև այժմ ամեն մի ուղածդ կատարուել է, այսուհետև էլ, քանի կենդանի եմ, կըկատարուի:

Կնոջ կասկածանքը բոլորովին փարատուեց ամուսնու խօսքերի վերայ. Մարտիրոսն էլ՝ ներշնչուելով իր ասածից՝ սրտապնդուեց, աչքերի վրայ կուտակուած կնճիռները յետ յետ գնացին, ճակատը պարզուեց, մանրիկ, բարի աչքերը պըսպղացին իրենց բներում և Մարտիրոսը էլի նոյն սրտաբաց, ուրախ Մարտիրոսը դարձաւ: Մարդ ու կնիկ կատակներ արին, ջան ասացին, ջան լսեցին և բոլորովին մոռացան դրամական հարցը:

— Ինչո՞ւ չես քնում, Մարտիրոս, ինչո՞ւ ես դու ու դու խօսում, ձայն տուաւ պառկած տեղից կինը:

Մարտիրոսը քնած ձևացրեց. քունը փախել էր. նա անդադար մտածում էր, թէ ինչպէս վաղը առաւօտեան կդիմի տիրոջը, կինդրի, որ իրեն պարտք տայ երկու հարիւր ուսուրի այն պայմանով, որ ամիս ամիս գեղջի իր ոռճկից: Եւ ով գիտէ, սատանի ականջը խուլ, գուցէ տէրը — Աւետ Պաւլովիչը — նրա երկար ծառայութիւնը աչքի առաջ ունենալով՝ հէնց նուիրի էլ նրան այդ գու-

մարը: Եւ այս միտքն էր, որ նրան այնքան ոգե-
ւորել էր, որ քունը փախել էր աչքից և մտա-
ծելու տեղ ինքն իրեն խօսում էր:

Ուշ էր, ժամի երեքը: Մարտիրոսը կէս քուն
կէս արթուն երազում տեսնում է, թէ ինչպէս
ուրախ գալիս է տուն, հանում է ծոցից շաշխուն
երկու հատ բոլորովին նոր, անծալ հարիւրանոց,
տալիս կնոջն ու ասում. «Դէ, Անինկա ջան, զնա,
ինքզ քո ձեռքով ամեն բան զնիր, պատրաստիր
Հոփսիկիս բաժինքը: Պիտի պարեմ Հոփսիկիս
հարսանիքին, քեզ հետ պիտի պարեմ»:

II

Առաւօտեան ժամի վեց և կէսն էր, որ Մար-
տիրոսը զամբիւղը կուռը գցած յետ դարձաւ շու-
կայից, օրուայ համար զնած պաշարը թողեց տա-
նը և շտապեց խանութ: Դեռ կողպած էին խա-
նութի դռները. նա չսպասեց դուրսը, մեծ դռ-
նով մտաւ բակը: Մտի արագ բաբախը, պարզ
երեսկահատը, ուրախ տրամագրութիւնը պարզ-
որոշ ասում էին, որ Մարտիրոսը գիշերուայ կի-
սին մաքումը գցած կորկոտը ուզում է հէնց կա-
նուխ առաւօտեան վայելել:

Մարտիրոսը տարուել է իր մաքով. չգիտէ
որտեղ է. ապուշ կարած բռնել է սիւնը, մի աչ-
քը գոցել, միւսը գցել վերի յարկին (նա հեռուն

նայելուց միշտ մի աչքով էր նայում) և արագ-
արագ շրթունքները շարժում, կարծես թէ խօ-
սում լինէր այնտեղ կանգնած մէկի հետ: Բայց
այնտեղ ոչ ոք չկար, նա միայն մտածում էր,
թէ ինչպէս, երբ Աւետ Պաւլովիչը ցած կգայ,
ինքը իսկոյն, քանի որ եկող զնացող չկայ, կմօ-
տիկանայ և իր համեստ խնդիրքը կառաջարկի:
Աւետ Պաւլովիչն էլ նախ կշնորհաւորի աղջկայ
նշանագրութիւնը և ապա իր խնդրած երկու հա-
րիւր ուրբլին առանց երկար բարակ մտածելու
կնուիրի իրեն: Չէ որ ուրիշ տեսակ չի կարող
լինել: Միթէ չեն տեսնում իր ծառայութիւնը:
Երջանիկ է Մարտիրոսը, մտքում շնորհակալու-
թիւն է անում տիրոջը. գոհ է ինքն իրենից, որ
լաւ գործակատար է համարւում, այլապէս մի-
թէ նրան կնուիր ին երկու հարիւր ուրբլի: Բայց
յանկարձ երբ սթափւում էր և ուզում էր
մէկ էլ միտը բերել, թէ ինչպէս խօսք բաց
անի Աւետ Պաւլովիչին մօտենալուց, դարձեալ
սպուշ էր կտրւում, բռնում էր հաստ սիւնը, մի
աչքով նայում գէպի վեր ու շրթունքները արագ
արագ շարժում:

Մարտիրոսը այսպէս երկար կմնար կանգ-
նած, եթէ որ նրան մի ոտնաձայն չսթափեցնէր:
Եկողը գործակատարներից մէկն էր: Բարե-
ւեցին, մնացին իրար երես նայելիս: Մարտիրո-
սը պատճառ ունէր չխօսելու, նորեկն էլ՝ դիմա-

ցինի արտասովոր արտայայտութիւնը տեսնելով՝ բարւոք համարեց լռել:

— Ինչո՞ւ ես այդպէս շուտ եկել, Իսրայէլ. չէ՞ որ ընակարանդ այստեղից շատ հեռու է, լռութիւնը խանգարեց Մարտիրոսը:

— Շուտ եմ եկել, որովհետև դեռ շուկայ չեմ գնացել: Մարտիրոս, եթէ ձեռքիդ մի յիսուն կուպէկ կայ, տուր, գնամ, հացից-մացից գնեմ, թողնեմ տանը, գամ: Չլինէր այս տեսակ կեանքը, աւելի լաւ չէ՞ր. մի օր կուշտ, մի օր քաղցած: Չենք էլ շանսատակ լինում, մի անգամից պրծնում:

— Ի՞նչ ես խօսում, սօ, տղամարդ եղիր, ամօթ է, ամօթ, կշտամբեց Մարտիրոսը:

— Տղամարդս ո՞րն է: Ի՞նչ ես կորցրել, ի՞նչի յետևից ես ման գալիս: Տղամարդ... ո՞վ է տղամարդը. — տղամարդը նա է, ով գրպանում անհատնում փող ունի, ով չի բաւականանում միայն ոտձկով, ով ամեն երեկոյ տուն դառնալուց անտակ գրպանից փող է, որ հանում է և խիղճը հանգիստ դարսում, ով օրեր է համարում անհամբեր այն կողոր գումարը տեսնելու, որ իրաւունք է տալիս սեփական գործ ունենալու: Ահա ով է տղամարդը. թէ չէ ես ու դու ծաղր ու ծանակի համար ենք ստեղծուել տղամարդկանց համար:

— Սուս, սուս, ինչ ես առաւօտ առաւօտ

բերանդ վատ բաց անում: Գողը տղամարդ չի, գողը ստոր է, ամենայետին արարածից էլ ստոր է: Գողի խիղճը հանգիստ չի, նա ամեն բոլոր գողում է իր շուկայից:

— Սկի էլ չի գողում, նրա խիղճը հանգիստ է, որովհետև նրա ընտանիքը փողոցում չի մնալու երբէք, իսկ մեր ընտանիքները կարող են մնալ, և դրա համար է, որ մեր խիղճը հանգիստ չի: Ում ձեռքով գալիս է, թող անի, օգտուի, աշխարհքը դմակ է, մարդը՝ դանակ: Մեր տէրը — Աւետ Պաւլովիչը չի՞ արել, ինքը մեռնի, հէնց արիւն-քրտինքով է դիզել այս հարստութիւնը, ոնց չի: Մարտիրոս, լսել ես երբ և իցէ, որ մի մարդ հալալ աշխատանքով հարիւր հազարների տէր դարձած լինի: Չի եղել ու չի էլ լինելու երբէք: Դէ աշխատիր, աշխատենք, մենք բարակ մանենք, ուրիշները՝ հաստ, և վերջապէս շատ հեռու չի, կտեսնենք, սւմ ընտանիքը փողոցում հաց կմուրայ:

— Իսրայէլ, քո ասածները գլուխս չեն մըտնում, սուտ ու մուտ բաներ ես խօսում. այս միայն հաստատ գիտեմ, որ պատիւ, խիղճ ինձ համար աւելի թանգ արժեն, քան ապահով վիճակը:

— Հէնց այդ. այդ շատ քիչ է. իսկ եթէ պատահի ընտանիքդ սոված մնայ և ստիպուած ձեռք մեկնի ողորմութիւն հաւաքելու, մի՞թէ այն ժա-

մանակ էլ պատուի, խղճի մասին կմտածես. ինչ արժի քո այդ պատիւը, խիղճը, և Աստուած՝ քո ճշմարտութիւնը տեսնելով՝ կարծում ես քեզ կօգնի.— երբէք. չեմ հաւատում, որովհետև նա աղքատներին չի սիրում. նա միայն և միայն հարուստներին է սիրում:

— Ինչ ես ասում, Իսրայէլ, Աստուած իր բոլոր ստեղծածներին մի տեսակ է սիրում. հարուստ աղքատ մէկ է նրա համար. միայն նրան է սիրում, ով Իր ցոյց տուած ուղիղ ճանապարհով է գնում:

— Մարտիրոս, հաւատացնում եմ քեզ, այդ բոլորը, ինչ որ ասացիր, սոււա է: Աստծու ուղիղ ճանապարհը սրն է.— այն, որ մարդիկ աղքատ չապրեն, այս աշխարհից բաւականութիւն ստանան. թէ չէ, եթէ նա մեզ ստեղծել է տանջելու համար, էլ ինչո՞ւ էր նեղութիւն քաշում ստեղծում. ահա թէ ինչու եմ ասում, որ նա միայն հարուստներին է սիրում, որովհետև նրանք են միայն, որ Աստծու ցոյց տուած ուղիղ ճանապարհով են գնում: Եթէ սոււա եմ ասում, եթէ մեղանչում եմ, թող այս բոլային, Աստուած, որ տեսնում ու լսում է ինձ, մի քար զցի գլխիս:

Մարտիրոսը այլայլուած քիչ հեռացաւ ընկերոջից. նա կեանքի մէջ առաջին անգամն էր լսում այդ տեսակ անհեթեթ կարծիքներ: Նա սիրում էր Իսրայէլին նրա շիտակութեան, ար-

դարութեան և ջերմեռանդութեան համար, և մինչև այդ օրը նրա բերանից չէր լսել այդ տեսակ խօսակցութիւն: Նա չգիտէր, ինչպէս ճանապարհ բերի ընկերոջը. մտածեց խօսակցութիւնը կարճ կտրել, թողնելով այդ բանը մի ազատ ժամանակի:

— Հիմա տեսնում ես, Մարտիրոս, որ այդ բոլորը սապնի պղպջակներ են եղել: Հաստատը սրն է, գիտես,— փողը. փողը մեծ ոյժ է, և ով փող ունի, նա է տղամարդը, նա է հանգիստ խղճի տէրը, նա է ազատ ինքնագլուխը և նա է Աստծու միակ սիրելին: Մարտիրոս, երդում եմ, ինչով ուզում ես, որ Աստուած ինձ ու քեզ չի սիրում. մենք նրա խորթ զաւակներն ենք: Նա, գիտես, սրմն է սիրում.— Աւետ Պաւլովիչին, մեր կառավարչին, մեր ընկեր գործակատար Սերգէյին, որ երկու տարի է, ինչ խանութ են բաց արել կառավարչի հետ միասին, և այստեղից ապրանք է, որ գնում է այնտեղ: Էլ չեմ երկարացնում մնացածի մասին. հէնց միայն մէկի մասին պիտի ասեմ. այն տափը մտած Մարկոսը ինչ է, որի բերանում կարծում էինք լեզու չըկայ, Աստուած նրան էլ է սիրում: Մի այս կողմը նայիր, տես այս տախտակները տաշեղների հետ ինչ ուստայութեամբ է կապկպած. այս նրա արածն է, կապկպել է տուն տանելու իբր վաւերափայտ, բայց բնոր կեղծում, եթէ կապոցի

7227-87



մէջ մի երկու թօփ թանգանոց բան չլինի: Չես հաւատում, գրագ կգամ:

Եւ Իսրայէլը՝ քրտինքի մէջ մտած՝ մի կերպ ցոյց տուաւ Մարտիրոսին թօփերի ծայրերը:

— Պիտի յայտնել Աւետ Պաւլովիչին, այդպէս չի կարելի թողնել. թէ չէ այդ միկնոյն է, թէ մենք էլ գողերի ընկերներ ենք, ասաց Մարտիրոսը վրդովուած:

— Հա՛, հա՛, հա՛, ծիծաղեց Իսրայէլը, դու, ինչպէս տեսնում եմ, այս ժամանակի մարդ չես. յետ ես մնացել, շատ յետ: Այ տղամարդութիւնը որն է. կնշանակի Մարկոսը իր փոքրիկ տեղովը լաւ է հասկացել ուղիղ ճանապարհը, լաւ է ըմբռնել կեանքի իմաստը. թէ չէ միայն ոռճիկ ստանալով ինչ համ պիտի ստանար այս կեանքից: Մարտիրոս, ոչ մի խօսք Աւետ Պաւլովիչին. շատ կնեղանամ քեզնից, եթէ բերանդ բաց ես արել:

Շատ խօսեցինք, դեռ շատ բան ունիմ քեզ հետ խօսելու, այժմ տուր յիսուն կողէկը, ուշ է, խանութները շուտով կբացուին:

— Ճիշտ ես ասում, այդ բոլորի մասին յետոյ մի ազատ ժամանակ կխօսենք ու քեզ ցոյց կտամ, թէ դու որքան սխալուում ես: Միայն մի բան եմ ուզում հարցնել, դու որ գողերին կողմնակից ես, և գողութիւնը լաւ բան ես համարում, հապա դու ինչո՞ւ չես անում, ձեռքդ բռնողը ո՞վ է:

— Մարտիրոս, ձեռքս բռնողը իմ բնաւորութիւնը, սովորութիւնն է: Շատ լաւ գիտեմ, որ յիմարութիւն եմ անում, քեզ նման ոռճկով բաւականանում, բայց որ չեմ կարողանում ինձ ծռել. գնդակի առաջ էլ կանգնացնեն, էլի չեմ կարող, դու էլ չես կարող, այ աշխարհքի կորած: Այս անտէր աշխարհքից ինչ լուր պիտի տանենք, հը՞. ինչ ենք ասելու, թէ ինչու ենք ծնուել... էհ, բաւական է, սիրտս լիքն է, չի հանգստանում. յետոյ կը խօսենք, այժմ ուշ է:

Իսրայէլը յիսուն կողէկը վերցրեց ու շատ խօսելուց հարբածի նման վռաղեց դէպի շուկան: Մարտիրոսը շճմած մնաց տեղն ու տեղը: Իսրայէլի վրդովուած խօսակցութիւնը, ընկեր գործակատարների գողութիւնը նրան այնպիսի դրութեան մէջ դրին, որ մոռացաւ մի առ ժամանակ իր մտադրութիւնը:

III

Մարտիրոսը նորից իր դերի մէջ մտաւ. նա մոռացաւ Իսրայէլին: Ե՛րբ լաւ է, գործակատարներից ոչ ոք չի գալիս, մտածում է Մարտիրոսը, երևի շուտով կիջնի Աւետ Պաւլովիչը, ինչ որ հարկաւորն է, կասեմ, կվերջացնեմ ու գործիս կկենամ. թէ չէ այս զրութեամբ դժուար թէ կարողանամ գործ անել: Բայց ինչ ուշա-

ցաւ. ինչո՞ւ ցած չի գալիս. ի՞նչ երկար են քնում այս հարձականքները. կարծես ոչ հոգս ունեն և ոչ ցաւ: Երբ ուզում են, քնում են, երբ ուզում են քնից զարթնում են: Տեսնես ինչպէս կլինէր, եթէ Աստուած բոլոր մարդկանց անհոգս ու անցաւ ստեղծէր: — Ի՞նչ լաւ կլինէր: Ինչպէս թէ լաւ կլինէր, ի՞նչ եմ ասում. այն ժամանակ էլ ի՞նչ կեանք, էլ ի՞նչ տղամարդութիւն: Ձէ, չէ, Աստուած շատ լաւ է անօրինել. պարապութիւնը մարդ կսպանի. պարապութիւնը յանցանքների բունն է. մարդիկ իրար կուտէին: Գործ, գործ, մեռնեմ գործին, քրտինքով աշխատած հացն է միայն ախորժակով ուտւում»:

Մարտիրոսը վերի յարկից մի ոտնաձայն լսեց, չոր կրծքի տակ սիրտը սկսեց արագ արագ բաբախել, քունքերը խփել, իսկ լորձուկները հէնց այն է կուլ էր տալիս հա կուլ, բերանը լիքը ու լիքը: Աչքերը ճպճպացին, մի աչքով դէպի վեր նայեց ու որքան աշխատեց մտաբերել, թէ ինչպէս պիտի խօսք բաց անի Աւետ Պաւլովիչին մօտենալուց, չկարողացաւ, որ չկարողացաւ: Լաւ է մի առ ժամանակ ոտնաձայնը ընդհատուեց, և Մարտիրոսը սկսեց հանգիստ մտածել. գտաւ, մոռացածը միտն ընկաւ:

Նորից լսուեց ոտնաձայնը: Աւետ Պաւլովիչն էր, սանդուխներով ցած էր իջնում: Մարտիրոսը այս անգամ իրեն չկորցրեց: Ահա գալիս է: Մար-

տիրոսը գլխարկը վերցրեց, բարևեց: «Ասեմ, չասեմ, ասեմ չասեմ,— ասեմ, պրծնեմ, ինչ լինում է, լինի»։ այսպէս մտածելով առաջ անցաւ ու սասաց.

— Աւետ Պաւլովիչ, մի խնդիրք ունիմ ձեզ...

— Հը, էլ չթողնէք լուսանայ: Երեկուայ ստացած պատուէրները շուտ պատրաստեցէք, էլ չըշփոթէք: Շուտ սկսէք, որ կարողանաք մինչև ժամի տասը հասցնել. արագ արագ վրայ տուաւ Աւետ Պաւլովիչը և, առանց բարևին պատասխանելու, քայլերը ուղղեց դէպի իր առանձնասենեակը:

«Երևի յարմար ժամանակ չէր. ինչո՞ւ շտապեցի. պէտք է սպասած լինէի: Բայց ինչպէս սպասէի. սրանից էլ յարմար ժամանակ: Ձէ, որ մէկ սկսել եմ, աւելի լաւ է վերջացնեմ»: Այսպէս մտածելով Մարտիրոսը հետևեց Աւետ Պաւլովիչին. գլխարկը ձեռքում պինդ բռնած, աչքերը թարթելով նորից երես առ երես կանգնեց և նորից բերանը բաց արաւ, որ խօսի, բայց այս անգամ էլ Աւետ Պաւլովիչը՝ նոր նոր հրամաններ տալով՝ արագ մտաւ առանձնասենեակը:

Մարտիրոսը տեղն ու տեղը հալուեց, դէմքը աւելի մաշուեց. մանր աչքերի առաջը մթնեց. վտիտ մարմինը կուչ եկաւ, փոքրացաւ, այնքան փոքրացաւ իր աչքում, որ կարծես կիսով չափ գետնի մէջ էր խրուել: Նա չկարողացաւ կենդ-

րոնանալ, իրեն հաշիւ տալ Աւետ Պաւլովիչի արհամարհական վերաբերմունքի մասին, միայն անգաղար կրկնում էր՝ «վազեցի. յետոյ ասէի, լաւ կլինէր. ով գիտէ, գուցէ յարմար չէր այսօր»:

Մինչ այս մինչ այն եկան բոլոր ծառայողները: Խանութիւր բաց արին. առևտուրը սկսուեց: Խանութիւր, պահեստի բակը յաճախորդներ էին, որ իրար յետևից գալիս, լցում էին: Գործը եռում էր. գործակատարները բանի էին, միայն Մարտիրոսն էր, որ աչքը գցած Աւետ Պաւլովիչի առանձնասենեակի դռան, մնացել էր տեղն ու աեղը մեխուած:

Ինչ է անում այստեղ, յանկարծ սթափուեց Մարտիրոսը, մինչև երբ կանգնած մնայ: Տեսնում է, որ արդէն ծառայողները նկատել են, որ ինքը ոչինչ չի անում. իրար ականջի փափսում են, երևի ծիծաղում են վրան: Չէ, վերջ տալ է հարկաւոր. աւելի լաւ է ներս մտնի, ասելուն ասի: Միթէ իրաւունք չունի քսան և հինգ տարուայ ծառայողը մի անգամ մի բան խնդրել, մանաւանդ որ պարտք է ուզում և ոչ թէ նուէր: (Մարտիրոսը արդէն մտքից հանել էր գիշերուայ կիսին փայփայած երկու հարիւր ուրբուլ նուէրը): Ներս մտնի ու յանկարծ մերժում ստանայ, յետոյ: Հապա ի՞նչ անի. — մնայ կանգնած. իր գործը ո՞վ կատարի:

«Չէ, աւելի լաւ է մի անգամից վերջացնեմ».

հա է, թէ չէ՝ իմանամ, պրծնեմ: Ներս մտնեմ, ինչ կլինի, կլինի».

ասաց ու յանկարծ ներս մտաւ Աւետ Պաւլովիչի առանձնասենեակը:

— Աւետ Պաւլովիչ, ասաց Մարտիրոսը, խոնարհաբար խնդրում եմ ուշք դարձնէք իմ խընդիրքին: Խնդրում եմ երկու հարիւր ուրբուլի պարտք այն պայմանով, որ ամիս ամիս գեղջէք ոռճկիցս:

Թթուեց կառավարիչը. գլուխը ցած գցեց առաջը թափթփած նամակների, հաշիւների վրայ, իսկ Աւետ Պաւլովիչը աշխամարհանքով, ծուռ ծուռ նայեց Մարտիրոսի կերպարանքին, կարծես ուզում էր ասել՝ «սրա շէնք ու շնորհքին նայէք, երկու հարիւր ուրբուլի ուզելուն»:

— Բա դու չես տեսնում, որ մենք զբաղուած ենք, խօսեց վերջապէս Աւետ Պաւլովիչը. հէնց տեղից վեր կենողը Աւետ Պաւլովիչ, Աւետ Պաւլովիչ. մեռնի Աւետ Պաւլովիչը, ձեր ձեռքից պրծնի: Մէկը հարցնի, ի՞նչ պիտի անես այդքան փողը: Այդ քանի տարում պիտի կարողանաս պարտք վերջացնել: Գնա, գնա, գործիդ կացիր: Հասակդ առած մարդ ես, ամօթ է, խելքիդ տիրութիւն արա: Գնա, սայլերը սպասում են:

— Աւետ Պաւլովիչ, քսան և հինգ տարի է ձեզ մօտ ծառայում եմ, երբ է եղել, որ ձեզնից մի բան խնդրեմ: Այս առաջի անգամն է, մի մերժէք, վիզս ծուռ մի թողէք, անհրաժեշտ

է այդ փողը: Ուրիշ բանի համար չի. պարզ ասեմ, աղջկաս պսակում եմ, ոչ մի կողէկ չունեմ:

— Ես մեղաւոր եմ, որ քսան և հինգ տարի ծառայել ես և մի հատ կողէկ չունես: Ինչո՞ւ չես խնայողաբար ծախսել ոտճիկդ: Մեղաւոր ես, շատ մեղաւոր, հապա կարծում ես, պսակուելը խաղ է, հա: Քեզ ո՞վ էր գօռում պսակուես. ինչո՞ւ ես պսակուել: Աչքներս լոյս, էլ ինչ հոգս ունենք. ասա սրանից յետոյ հէնց դրամարկղի առաջ պատրաստ կանգնած մնանք ծառայողների սպասումը, էլի: Ինչ կայ որ, մէկը կասի՝ պսակուում եմ, փող է հարկաւոր, միւսը՝ աղջիկ է մարդու տալիս, փող է հավկաւոր, մի երրորդը՝ երեխայ է ծնուել, մկրտում է, փող է հարկաւոր: Փող, փող, փող, ախր մի հարցնող չկայ, այդ փող ասածդ, որ կայ, տեսնենք, հորով է, ձորով է: Չէ, Մարտիրոս, ուղածդ գլուխ գալու բան չի. գնա, սուս ու փուս գործիդ կացիր:

— Շատ խնդրում եմ, մի մերժէք, խնայեցէք: Վերև Աստուած, ներքև՝ դուք: Էլ ուրիշ ճար չունեմ: Դուք էք իմ հայրն էլ, իմ տէրն էլ, ձեզ եմ ապաւինել:

— Էլի իրենն է շարունակում: Գնա, գնա գործիդ: Մեզ էլ գործից մի գցիր: Մարտիրոս, չեմ կարող պարտք տալ. հասկանո՞ւմ ես, ինչ ա-

սել է, չեմ կարող: Ի՞նչ ես սառել, տեղդ կանգնած մնացել. այս ինչ տեսակ մարդ է, տօ:

— Ուրեմն իմ այսքան տարուայ ծառայութիւնը ոչինչ: Քսան և հինգ տարի դադար չեմ ունեցել, քսան և հինգ տարի կեանք եմ մաշել, և վերջը այսպէս էք գնահատում ձեր հին ծառայողին. էլ ինչո՞ւ եմ ապրում:

— Դա ինչ նորութիւն է. մտածում ես, ի՞նչ ես ասում. մտել ես ծառայութեան, իհարկէ պիտի դադար չունենաս. հապա հնց ես իմացել. ձեռքերդ ծախս, նստես, քեզ ո՞վ կպահի: Քսան և հինգ տարի որ ծառայել ես, ձրի՞ ես ծառայել: Չլինի՞ փորձես, մի ուրիշ տեղ մտնես, տես, ի՞նչ ոտճիկ կտան: Հը, քեզ եմ հարցնում, ամիսը քսան ուրբի կտան: Որ լաւ մտածես, դեռ շատ և շատ շնորհակալ պիտի լինես մեզնից, որ տեղդ մնում ես: Չենք հեռացնում, ասում ենք, հին ծառայող է, երեխայատէր է, թող տեղը մնայ, դա էլ թող մեր հոգու վարձքը լինի: Մեր տեղը ուրիշը լինի, քեզ կպահի. շատ մի կմտածի, թէ Մարտիրոսը հասակը առել է, երեխայատէր է, պէտք է խղճալ: Իսկ եթէ միտքդ ծուռել է, չես հաւանում մեզ, ամեն ըոպէ կարող ես, դռները բաց են առաջդ: Մարտիրոս, ես վերջացրի:

Եթէ Մարտիրոսին միայն մերժէին պարտք տալու, ինչ պիտի անէր, գլուխը կախ, լեզուն

կծած կհեռանար, կհաշտուէր այդ անախորժ դէպքի հետ՝ մտքում անիծելով հարուստներին: Բայց երբ նրան արհամարհեցին, նրա քսան և հինգ տարուայ ծառայութիւնը ոտի տակ տուին, ոչինչ համարեցին. երբ նրա առաջ դռները լայն լաց արին և երբ նրա երեսին առանց կարմրելու ասացին, որ եթէ նրան պահում են, իրենց բարեսրտութիւնից պիտի շնորհակալ լինի, հոգու վարձք են համարում. այդտեղ նա յանկարծակիի եկաւ, ներսում մի բան կտրուեց, սուր ցաւ զգաց կըրծքի տակ, աչքերը մթնեցին, անզօր շրթունքներն ու լեզուն շարժուեցին տակն ու վրայ եղած մաղձը տիրոջ գլխին թափելու: Բայց բառեր չարտասանեցին ջղաձգութեան մէջ ընկած լեզուն ու շրթունքները: Նրանք միմիայն շարժուեցին. Եւ Մարտիրոսը այսքանը միայն կարողացաւ անել, որ ձեռքից ընկած գլխարկը վերցրաւ ու ցամքած բերանով՝ «շատ շնորհակալ եմ» ասելով՝ դուրս գնաց:

IV

— Ես որ ասում էի, մեր հին ծառայողները վերջ ի վերջոյ մի մի պատուհաս պիտի դառնան մեր գլխին, դարձաւ Աւետ Պաւլովիչը կառավարչին: Ահա, սրանից էլ լաւ օրինակ: Քսան և հինգ տարի ծառայել է և իրաւունքով է խօսում: Ինչ-

ներիս են պէտք հին ծառայողները. փառք Աստծու, հիմա էլ այն ժամանակը չի, որ ծառայողից դողանք: Այդ քամին անցաւ, այդ ցնորքը էլ չի կրկնուի: Սկի չենք մտածում, պառաւել կայ, գործելու անընդունակ դառնալ կայ, անկելանոց խօմ չեմ շինելու խանութա: Դուք էլ գիտէք, որ նաւթահանքում, երբ մեքենան հնանում է, բանի պէտք չի գալիս, դէն ենք շարտուում, նորը գնում: Ձէ, պէտք է լաւ մտածել, քանի ուշ չի, մի բան անել:

— Աւետ Պաւլովիչ, այդ ցուցակը վաղուց է պատրաստել եմ, պատասխանեց կառավարիչը ծոցից հանելով յուշատետրը. ահա կարգամ մէկ մէկ՝ հաշուապահը, նրա օգնականը, գործակատարներից Մարտիրոսը, Իսրայէլը և այն երկու հոգին, որ հէնց ուճիկ աւելացնելու մասին են մտածում: Եթէ թոյլ տաք, սրանց հէնց այսօր և եթ կյայտնեմ, որ ազատ են:

— Խեղճ գալու տարի չի. պէտք է մաքրել, թէ չէ դրանք սոված գայլերի նման մարդ կուտեն: Ինչպէս բարձրանում են նաւթի գները, խօսքը փոխեց Աւետ Պաւլովիչը, ցոյց տալով կառավարչին բօրսայի գները. շուտով երևի երեսուն և հինգ, երեսուն և վեց կոպէկ կդառնայ: Չլինի խաբուեցինք, որ մեր նաւթահանքին երկու ու կէս միլիօն նշանակեցինք. միթէ չէր կարելի երեք միլիօնով ծախել:

Կառավարիչը յայտնեց, որ զնոզը կարող է հրաժարուել, ընդհակառակը հարկաւոր է շուտով գրաւոր հաստատում ունենալ:

Խանութը, դրասենեակը հին ծառայողներից մաքրել կառավարչի մտքի ծնունդն էր և ոչ Աւետ Պաւլովիչի, բայց որովհետև Աւետ Պաւլովիչը սիրում էր ամեն մի նորմուծութիւն, ամեն մի նշանաւոր բան գիտութեամբ թէ անգիտութեամբ իրեն վերագրել, այդ բանում էլ չզլացաւ նոյնն անել: Կառավարչի համար միևնոյն էր, թէ այդ նորմուծութիւնը ում մտքի ծնունդն էր. այդ նրան չէր հետաքրքրում. նրան հետաքրքրում էր միայն, թէ երբ բոլորովին կազատուի իր չսիրած մարդկանցից, որ կարողանայ ազատ ու ինքնագլուխ կառավարել Աւետ Պաւլովիչի գործերը: Այդ բանում զլխաւոր խոչընդոտը հաշուապահն էր, որ բացի գործի մէջ ունեցած հմտութիւնից և մի մաքուր անձնաւորութիւն էր: Նա լաւ գիտէր, որ հաշուապահն ու Մարտիրոսը տիրող գործի համար մի մի գանձ են, բայց որովհետև և գիտէր, որ երկուսն էլ մաքուր ու շիտակ մարդիկ են, մէկը խանութում, իսկ միւսը գրասենեակում, դրա համար էլ ուզում էր, որքան կարելի է, շատ շուտով ազատուել այդ երկու խոչընդոտներից՝ աչքի առաջ ունենալով իր սեփական գրպանի հոգացողութիւնը: Ահա թէ ինչու ուրախացաւ կառավարիչը,

երբ յարմար առիթը ինքն իր ոտով եկաւ իրագործել տալու փայփայած մտադրութիւնը:

V

Մարտիրոսը կանգնած փակ դռան յետև փրամբողջ էութեամբ, կարծես, մի մարմնացեալ բողոք լինէր: Նրա աչքի առաջ պատկերացաւ իր քսան և հինգ երկար տարիների շիտակ, անխոնջ ծառայութիւնը: Եւ իր այդ մաքուր ծառայութիւնը մի քանի բոպէի մէջ ոտնատակ արին, ցեխի հետ տրորեցին:

«Ինձ, ինձ պահում է; որովհետև խղճում է վրաս, գայրացած խօսում է ինքն իրեն. ինձ, որ օրն ի բուն գործել եմ, հանգիստ ու դադար չեմ ունեցել. ինձ, որ տիրոջ գործը սեփական գործ եմ համարել, որ տիրոջ մի թելը իմ ներկայութեամբ չի կորել: Անխիղճ մարդ, այդ ունի ես բարեգործութիւն անում և դու սեահողի, հոգուդ փրկութեան մասին ես մտածում. և ես ու իմ ընտանիքն է այդ զոհը, որ զոհաբերում ես Աստուծուն: Խաբիր ում ուզում ես, առանց դրան դու չես կարող վաճառականութիւն անել, բայց ինչո՞ւ ես խաբում և Աստուծուն: Յուդա, Յուդայի պէս խեղդամահ կլինես քո այդ յանցանքի համար. Կնշանակի ես, ես ինչպէս մի անդամալոյծ, մի անպէտք մարդ այսքան տարիներ մուրացկա-

նութեամբ եմ պահել ընտանիքս: Տալիւ չէս մտնում, Մարտիրոս, այդ ի՞նչ ես լսում քո յիսուն տարիքում. այդ ի՞նչ եմ ասում քեզ համար: Թքեցին քո ազնիւ աշխատանքով ձեռք բերած պատառի վրայ... Կինդ, երեխաներդ լսեն, իմանան, որ դու մուրացկանութեամբ ես նրանց պահել, որ թքոտած պատառով ես նրանց կերակրել...: Ո՛ւհ, Աստուած, այս ի՞նչ օրի հասայ. պատիւս, այսքան տարուայ պատիւս... Ինչո՞ւ մթնեց. ինչո՞ւ է գլուխս պտտում...:

Նա յենուեց պատին:

«Հա՛, հա՛, հա՛, յանկարծ քրքջաց Մարտիրոսը ուշքի գալով, սպասիր, գտայ, չես պրծնի ձեռքիցս: Ծիծաղիր. ծիծաղում ես վրաս, թէ ինչո՞ւ եմ բարակ մանել, որովհետեւ հաստ ու բարակ մէկ գին է քեզ համար: Մեղաւոր եմ, որ փող չունեմ. մեղաւոր եմ, որ պսակուել եմ: Ասա՛, ասա է, ինչո՞ւ ես պապանձուել, այդ էլ ասա՛, պրծիր, մեղաւոր եմ, որ գողութիւն չեմ արել քո սիրած կառավարչի ու գործակատարների նման: Յոյց կտամ քեզ, թէ ինչ ասել է ծիծաղել այսքան տարի պատիւ պահած մարդու վրայ: Թանգ կնստեցնեմ քեզ վրայ այդ լիբը ծիծաղը: Պատուիս հետ ես խաղո՞ւմ, անօրէն Յուզա: Չեմ կարող տանել քո հասցրած անպատուութիւնը, դու էլ պիտի աղքատանաս, էլ ուրիշ ճար չունիմ: Պիտի աղքատանաս, այնպէս աղ-

քատանաս, որ երեխաներիդ ձեռքից բռնած ողորմութիւն հաւաքես»:

Մարտիրոսը այլայլուած դուրս եկաւ բակից, բայց տուն չգնաց. նա մոռացել էր կնոջը, երեխաներին, աղջկայ պսակը և մտածում էր միմիայն վրէժինդրութեան վրայ: Նա վրէժխընդրութեամբ էր ուզում իր սոնատակ եղած պատիւը վերականգնել: Փողոցից փողոց անցնելով ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէս մտաւ եկեղեցու բակը: Ոչ ոք չկար: Կանգնեց մի անկիւնում եկեղեցու պատի տակ ու սկսեց շրթունքները արագ արագ շարժել: Մարտիրոսը չէր աղօթում. նա խօսում էր Աստուծո հետ.

«Աղաչանքս սո՛ւ, Երկնային Բարերար, ուրիշ ոչինչ չեմ խնդրում Քեզնից, միմիայն իմ սիրտը կոտորողին, ինձ հոգեպէս սպանողին սիրտը կոտորիր, հոգեպէս սպանիր: Աստուած կլսի խեղձի ձայնը, Աստուած կլսի ապօրէն կերպով անպատուածի աղաչանքը: Դու կլսես, որովհետեւ Դու միայն գիտես, ես ինչ եմ արել այդ Յուզայի համար: Աստուած, ամենահզօր Աստուած, մի պատիժ, մի պատուհաս ուղարկիր այդ անօրէնի համար...: Հա, ես կլինեմ այդ պատուհասը...: Նա համաձայն է... Նա ինձ հրամայում է... Նա ինձ ուղարկում է..., ես կգնամ... կըհրդեհեմ, չոր տափ կդարձնեմ...: Պիտի աղքատանայ, չօքէչօք պիտի գայ, առաջս մեղայ գայ...»

Պատիւս, պատիւս պիտի վերականգնեմ»...:

Եւ Մարտիրոսը կարծես տեսաւ, թէ ինչպէս իր սիրելի Աստուածը եկեղեցու գմբէթի վրայից հրամայեց՝ գնալ, չխնայել, հրդեհել, մերկ ու սոված թողնել իրեն խաբույ Աւետ Պաւլովիչին:

Եւ նա գնաց...:

VI

Ժամի շորսն էր: Աւետ Պաւլովիչը լաւ ճաշելուց յետոյ անցել էր առանձնասենեակը. բայց այդ օրը նա հանգստանալու կարիք չէր գգում: Երկու ու կէս միլիօնը նրան դադար չէին տալիս. նա թիք տուած մտածում էր. մտքում հաշուեց տարիների ընթացքում դիզածը, վրան աւելացրեց երկու ու կէս միլիօնը, որ շուտով պիտի ստանար իր նաւթահանքը գնողից, դուրս եկաւ մի պատկառելի գումար: Աւելորդ է խանութ ունենալը. ինչին է պէտք. չի սագում այլ ևս իրեն խանութպան անունը. և նա հաստատ քայլերով մտաւ երեակայութեան աշխարհը: Այդ մեծ գումարը զանազան ձեռնարկութիւնների մէջ է մտցնում և, չբոլորած երկու, երեք տարին՝ դառնում է Բագուայ առաջնակարգ հարուստներից մէկը: Անցնում է գլխով երկու երեք տարի էլ, յաջողութիւնը յաջողութեան յետևից նրան

տանում, հասցնում է ամենաբարձր աստիճանին, ուր մենակ ինքն է կանգնած: Եւ կանգնած է հասարակ մահկանացուների համար անհասանելի բարձրութեան վրայ. խրոխտ, հանգիստ նայում է շորս կողմը հաւաքուած միլիօնատէրերին, խանութպաններին, մանր մունր կառավարիչ ինժեներներին, և ինչպէս մանր, ամբած են երևում աչքին, ինչպէս սողում, շողոքորթում են: Ահա մի թեթև ակնարկ է գցում դէպի դիպլոմաւորները, և քանի՛-քանի՛ գլուխներ են խոնարհում մի ակնթարթում նրա ոտերի առաջ:

Աւետ Պաւլովիչը հարիւր հազարներ է նուիրաբերում բարեգործական հիմնարկութիւններին. ճանաչում նն բարձր շրջաններում. պետական խորհրդականի աստիճան է ստանում. կուրծքը զարդարում է շքանշաններով. հասնում է անմահներին:

Եւ Աւետ Պաւլովիչը մի հատ է ամբողջ կովկասում: Նրա խօսքը օրէնք է: Տեղ չկայ, որ նրա անունը լսած չլինեն: Նրա համբաւը տարածուելով գնում, հասնում է իր հայրենի խուլ գիւղը: Գիւղացիք պարծենում են նրանով. հարեան գիւղը նախանձում է: Աւետ Պաւլովիչը գիւղում է: Քոյր, Բառասուն տարի է չի տեսել ծննդավայրը: Քոյր, եղբայր, ազգական, ծանօթ, անծանօթ շրջապատել են նրան. չեն կշտանում նրա վրայ նայեալուց. լիզում են նրա կոխած ոտատեղերը. իրենց

անկեղծ յարգանքն են մատուցանում վաղեմի հորթարած Վիտիսին. և նա յանկարծ զուգորդաբար Աստուածաշնչի Յովսէփ գեղեցիկն է մտաբերում:

Շրջում է գիւղի շրջակայքը. հիանում է ստուերախիա խոր ծմակներով, սառնորակ աղբիւրներով, կարկաչահոս գետակներով: Կատարում է համագիւղացիների վաղուց ի վեր աղերսածը. կառուցանում է խարխուլ եկեղեցու տեղը մի հոյակապ եկեղեցի և ճակատին փորել տալիս իր անուն ու ազգանունը: Չի մոռանում շինել տալ և ուսումնարան: Նորընտիր հոգաբարձուներին է տալիս ուսումնարանի բանալիները և ապահովում ընդ միշտ:

Ապահովում է ցմահ քոյրերին, եղբայրներին, նոյն իսկ և հեռու ազգականներին և ֆաբ բարև ասում բոլոր գիւղացիներին, որ տնով տեղով դուրս էին եկել ճանապարհ գցելու:

Յանկարծ սթափում է Աւետ Պաւլովիչը. քոյրերին, եղբայրներին ապահովելը նրան յիշեցնում է օգնութեան յուսով իրեն դիմող երկու շաբաթ առաջ մի այրի կնոջ: Նա կոպիտ կերպով մերժել էր նրան և ծառային պատուիրել, որ միւս անգամ ներս չթողնի: Աւետ Պաւլովիչը յիշում է այրի կնոջ ամուսնուն: Տասը տարի առաջ, երբ իրեն սնանկ յայտարարեց, նրա յիսուն հազարը իր մօտն էր. իւրացրեց ուրիշների տաս-

նեակ հազարների հետ և նրա յիսուն հազարը: Թշուառ հայրը՝ չկարողանալով տանել ընտանիքի վերջին ծայր չքաւորութիւնը՝ դիմեց ինքնասպանութեան: Աւետ Պաւլովիչը յանդիմանելով իրեն՝ շուտափոյթ կանչել է տալիս այրուն և լիառատ ապահովում ցմահ:

Ուժասպառ եղաւ Աւետ Պաւլովիչի ոգևորութիւնը. նա սթափուեց. դուրս դրաւ օտը երևակայութեան աշխարհի շէմքից հեզնական ժպիտը բերանին. և նա հանգիստ է մտածում. գնայ գիւղը, գալու են քոյր, եղբայր, ազգական. քանի մէկի ցաւին լսի, քանի մէկին օգնի: Աւելի լաւ չէ, ուղարկի փողը և թող իրենք գիւղացիք իրենց համար եկեղեցի էլ շինեն, ուսումնարան էլ: Բայց միթէ աւելորդ շոյալութիւն չէ ուսումնարանը. ինքը, որ ուսումնարանի երես չի տեսել, Թանուն ազգանունը հազիւ հազ է ստորագրում, ումնից է պակաս: Ուսումն էլ, խելքն էլ փողի մէջն է: Ով փող ունի, ուսումնական էլ է, խելօք էլ է: Երկու հազար ըուբլի կուղարկի. այդ էլ բաւական է, թող նորոգեն հին եկեղեցին:

Աւետ Պաւլովիչը յանկարծ մի շարժում գործեց և կարծես հեռու վանեց օձիքից պինդ բըռնած ոգևորութիւնը: Այժմ նա բոլորովին լրջացաւ: Քիչ կարիք կայ որ նորոգել եմ տալիս եկեղեցին, կշտամբում է Աւետ Պաւլովիչը ինքն իրեն, հին եկեղեցումն էլ ժամ-պատարագ են ա-

նում: Գիւղ տեղ է, այն հինն էլ բաւական է. ունի են ուղղում գարմացնել: Այդ բոլորի փոխարէն, քանի տարի է, ուղղում եմ ծնողներին վրայ քար քաշել, չեմ կարողանում, մի յարմար ժամանակ չեմ գտնում. հարիւր ուրբի ուղարկեմ տէրտէրին, թող քար քաշի, մնացած փողովն էլ պատարագ անի և հոգեհաց տայ գիւղացիներին»:

«Սուտ է, քաղցածութիւնից օր ցերեկով մարդ չի մեռնի. քոյր, եղբայր, ազգական, այրին առանց իմ օգնութեան էլ ապրում են և այսուհետև էլ ապրելու են: Համեստութիւնը, չափաւորութիւնը մարդու ամենագլխաւոր օրէնքներն են. որքան համեստ լինես, որքան չափաւոր լինես, այնքան յաջողութիւնը գլխիցդ անպակաս կլինի»:

Աւետ Պաւլովիչը նայեց ժամացոյցին. ժամի հինգն էր, և շտապ իջաւ խանութը:

VII

Երեկոյեան ժամի հինգն էր, որ Մարտիրոսը Բալախանու կայարանից հապճեպ, շղայնօրէն ուղղուեց դէպի տիրոջ նաւթահանքը:

Հասաւ նաւթահանքը: Առանց վարանելու մտաւ մի վիշկայ, ուր բանուոր չկար, և շտապ, կարծես մի բան գտածի նման, մօտեցաւ հորի բերանին: Գազի հօտը դիպաւ Մարտիրոսի քթին:

Ահա հորի բերանը, ահա լիառատ գազը. բաւական է մի հատիկ լուցկի, որ մի ախնթարթում բռնկուի, բոցավառուի, մոխիր դառնայ ամբողջ վիշկան, ամբողջ նաւթահանքը: Եւ այդ քայլը կվերականգնի իր անարգուած անունը. այդ բոցը կսրբի, կմաքրի Աւետ Պաւլովիչի հասցրած վերաւորանքը. այդ բոցը՝ հեռու կվանի այն մըղձաւանջը, որ առաւօտեանից ի վեր տանջում է իրեն: Այո, նա ազատուում, մաքրուում է բոլորովին և դառնում է նոյն ուրախ, նոյն գործունեայ Մարտիրոսը: Նա աշխուժացաւ, ոյժ գգաց ներսը և մեքենայօրէն հանեց գրպանից լուցկու տուփը: Մարտիրոսը չորս կողմը նայեց. մենակ է, ոչ ոք չկայ, ոչ ոք չի տեսնում. և ձեռքերը սկսեցին դողալ, սփրանեց, ճակատը սառը քրտինք կոխեց ու մի պահ աչքերի առաջը մթնեց: Բայց ահա, կարծես նախատելով իրեն, հեռու վանեց անվճռականութիւնը, բաց արաւ տուփը և մատերի արանքում տեսաւ լուցկին:

«Ոչ ոք չի տեսնում, մտածում է Մարտիրոսը, վրէժս եմ հանում, պատիւս եմ վերականգնում, աղքատացնում եմ Աւետ Պաւլովիչին, թող գնայ հաց մուրայ երեսաների ձեռքից բըռնած». և հէնց այն է ուղղում էր վառել լուցկին, որ մի վայրկեան կանգ առաւ և նորից սկսեց մտածել. «Եւ ոչ ոք չի իմանալու, թէ ով հրդեհեց. միայն և միայն ես պիտի իմանամ: Իսկ

Աւետ Պաւլովիչը. նա երբէք չի իմանալու, որ ես եմ եղել նրա աղքատացնողը... Եւ այս բոլորը ես անում եմ ծածուկ, գողի պէս... Արեան հոտ է փչում... տմարդութիւն է»...

Եւ Մարտիրոսի ձեռքից վայր ընկան լուցկին ու տուփը. նա դողալով դուրս եկաւ վիշկայից և, մի կերպ քաշ գալով, գնաց, նստեց վիշկաներից մի քիչ հեռու:

Մարտիրոսը նայում է վիշկաներին, բայց ոչինչ չի տեսնում: Նա չի կարողանում կենդանանալ, հաշիւ տալ իր արածի վրայ. երազ է թւում արածը: Բայց ահա կարծես աչքերի վրայից կամաց կամաց քաշուեց, հեռացաւ թանձր քօղը, և նա պարզ տեսաւ վիշկաները. այնտեղ բանում են անդադրում բանուորներ. այնտեղ նաւթ են ստանում գետնի խորքից. նաւթ, նաւթ, օդը, մարդիկ, բոլորը, բոլորը ծծուած նաւթով. տաժանելի աշխատանք... Մարդիկ մի փոքր հացի համար օրն ի բուն տանջում են՝ զրկուած ընտանիքից, ենթակայ վիրաւորանքի: Ի՞նչ կլինէր, եթէ հրդեհած լինէր. սարսափելի է. հիմա այրում կլինէր և մի երկու ժամում չոր տափ դարձած, մի քանի բանուորներ այրուած, ածուխ դարձած... Արեան հոտ է փչում. աւելի լաւ է ձեռք վեր առնի գլխից, տնից-տեղից զրկուի, քան տմարդի գործ կատարի, քան խեղճ, թշուառ մարդկանց արիւնը մտնի:

Իսկ իրեն հասցրած վիրաւորանքը, իր անպատուութիւնը. ինչպէս ազատուի այն տանջանքից, որ առաւօտեանից ի վեր կրծում է ներսը. ինչպէս առաջուայ Մարտիրոսը դառնայ: Նա զգում է, որ այլևս չի կարող այնպիսի հայր, այնպիսի գործակատար լինել, ինչպէս մի օր առաջ է եղել. նա, կարծես տեսնում է, որ կինը, երեսնաները այլևս սիրով, յարգանքով չեն վերաբերում իրեն. իսկ խանութում. այնտեղ նրա վրայ նայում են, ինչպէս մի անդամալոյծի, ինչպէս մի աղքատի վրայ, որ հոգու վարձքի համար հաց են տալիս, պահում... Նա կենդանի մեռած է, նրան բարոյապէս սպանեց Աւետ Պաւլովիչը: Կարող է սրտիւ պահանջել տիրոջից. չէ, անկարելի է. հաւասար չեն ոյժերը: Ո՞ր ուրոնի արդարութիւնը. մի՞թէ՞ չգիտէ Մարտիրոսը, որ օրէնքը, հասարակական կարծիքը ուժեղի մէջն են տեսնում արդարութիւնը: Եւ նա զգաց իր անգօրութիւնը, իր ոչնչութիւնը, իր անարդարութիւնը Աւետ Պաւլովիչի առաջ: Նա ձուլուեց հարիւրաւոր, հազարաւոր գործակատարների, բանուորների միապաղաղ շարքերի մէջ...:

Եւ խեղճացաւ Մարտիրոսը: Այլևս պատուի մասին չէր մտածում: Գլուխը խոնարհած կրծքին, թոյլ ձեռքերը զրպաններում, գողդոջ քայլերով ուղղուեց դէպի երկաթուղու կայարանը...:

Հնկերութեանս հրատարակութիւնները

1. Լ. Ուօլլէս. Բէն Հուր. հ. Լ. Թարգմ. անգ. Փ. Վարդանեան.	— 75
2. Նոյն, հ. II.	— 75
3. Շիրվանզադէ, Արտիստը.	— 25
4. Մուրացան. Գէորգ Մարզպետունի, պատմական վէպ	1— 20
5. Ժուզովսկի. Քնած արքայադուստրը, պատկերազ. հէքիաթ. փոխադր. Ա. Թ. Խնկոյեան.	— 15
6. Ստ. Տէր-Աւետիքեան. Պատմաձգներ	— 50
7. Նար-Դոս. Մահը, վէպ.	1— 20
8. Ն. Բուբակին. Ստորերկրեայ կրակ. պատ.	— 50
9. Զ. Դիկկէնս. Դաւիթ Կոպպէրֆիլդ. պատկ. վէպ. մասն առաջին, անգլ. Թարգմ. Փ. Վարդանեան	— 75
10. Նոյն, մասն երկրորդ	— 75
11. Նոյն, մասն երրորդ	— 75
12. Շիրվանզադէ. Երկերի ժողովածու, հատ. IV	1— 50
13. Դ. Դեմիրճեան. Բանաստեղծութիւններ	— 50

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

1912

- № 1. Գաբրիէլ ԴԱՆՈՆՅԻՑ. Զիօզօնդա. ողբ. 5 ար. Փրանս. Թարգմ. Ս. Յակոբեան:
- № 2. Իլիա Ճաւճաւաձէ. Մուրացկանի պատմաձը. վրաց. Թարգմ. Տ. Փիլոմեան:
- № 3. Ա. Ահարոնեան. Աստու կրակը:
- № 4—5. Իւշկիկիչ. Թագաւոր, ոռու. Թարգմ. Յ. Յովհաննիսեան:
- № 6. Յ. Մալխասեան. Յանցանքը:
- № 7. Սէյրի. Ծիւ ու Ծաղիկ:
- № 8—9. Կոմս Ա. Կ. Տօլստօյ. Իօանն Ահեղի մահը. ողբ. 5 ար., ոռու. Թարգմ. Տ. Յովհաննիսեան:
- № 10. Անտոն Աելով. Պատմաձգներ, ոռու. Թարգմ. Ռ. Պան-Աղատ:
- № 11-12. Ա. Ս. Գրիբաեղով, Խելքից պատուհաս, կոմ. չորս գործ. ոտանաւորով. Թարգմ. Լ. Մանուէլեանի:

1913

- № 13. Լորդ Բայրոն. Մանֆրէդ. Անգլիերէն բնագրից Թարգմանեց Տիրայր վարդ.
- № 14. Գիւլի-զը-Մոպսսան. I Ճարպագունդը, II Չարղը. Փրանս. Թարգմ. Ռ. Պան-Աղատ:
- № 15. Վ. Վալադեան. Բժիշկը. զրամա 3 գործ.
- № 16-17. Կսուա Համսուն. Պան. Լէյտընանտ Թոմաս Գլանի թղթերից. գերմ. Թարգմ. Ա. Իսահակեան:
- № 18. Մարգար. Վէպիկներ.

ԻԻՐԱՔԱՆՁԻԻՐ ՀԱՄԱՐԸ 15 Կ.

<< Ազգային գրադարան



NL0355354

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1.	Զարարաստիկ Թուղթը, Ստ. Տէր-Աւետիքեան	— 8
№ 2.	Նահապետական տուն, Մովսէս Ղուկասեանց	— 5
№ 3.	Գործակատար Մարտիրոսը Ս. Մ.-Շահնազարեանց	— 7

